

# ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ

15.05.2017



Մի րեկի հայրենակիցներ:

Ջերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Վայոց ձորի ողջ ազգաբնակչությանը՝  
Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ:

Ընտանիքը հայ ժողովրդի համար սրբության սրբոց է, ազգային արժեքամակարգի  
պահպանման և անհատի ձևավորման յուրահատուկ դարբնոց: Ընտանիքը տուն է ու օջախ,  
որի ամրությունը պայմանավորված է օջախում տիրող սիրով ու միմյանց նկատմամբ տածած  
ուշադրությամբ ու հոգատարությամբ: Իսկ ամուր ընտանիքները ամուր պետականություն  
ունենալու ամենահիմնական պայմանն ու հիմնաքարերն են, քանզի ընտանեկան  
միջավայրով է պայմանավորված անհատի դաստիարակությունը: Դաստիարակությունն է  
անհատի քաղաքացիական մտածողության հիմքը: Իսկ քաղաքացիական հասարակության  
ձևավորումը պայմանավորված է անհատների հանրային մտածողությամբ: Եվ որքան ամուր  
են ընտանիքի հիմքերը, նույն չափով ամուր է տվյալ պետականությունը: Երիցս ճշմարիտ են  
հայ մեծ վիպասան Մուրացանի խոսքերը՝ գորավոր է այն ազգը, որն ունի գորավոր  
ընտանիքներ: Զորություն ու ամրություն ձեր ընտանիքներին:

Կրկին շնորհավորում եմ սիրով ու ջերմությամբ լեցուն այս անկրկնելի տոնի  
կապակցությամբ: Թո՛ղ դ բոլորիդ ընտանիքները լինեն ամուր, դառնան մեր երկրի զարգացման  
ու առաջընթացի գրավականը, մեր հայրենիքի հարատևման երաշխիքը:

Թանկագին բարեկամներ, բոլորիդ ընտանիքներին մաղթում եմ համերաշխություն,  
բարեկեցություն և Աստվածային լույս: Ապրեցեք խաղաղությամբ ու Աստծու օրհնությամբ: